

№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 5—6.

Աշխէնի ծաղրածուն (պատկ.)։ *Եւ այս մոայլ*։.. Ա. Խահակեանի։ *Փոքրիկ վարժապետները* (անգլիերէնէ). *մանկապարտիզի երգ.* Յ. Թ. Գալեեան։ *Թիթեռնիկի թեւերը.* փոխադր. Լ.։ *Արդարին կ'օգնէ ողորմած Աստուած* (զրոյց). Յար. Թումանեանց։ *Լէօն-Կայար.* Հայկական աւանդութիւն (վերջ). Սէյլան։ *Երաշտ տարի* (ոտանաւոր). Ս. Սափարեանց։ *Մի՛ հնախանձիր ոչ ոքին.* Նորենց։ *Ծպտեալ մուլթան* (պոլսական լեզենդա). Ատրպետ։

Տեղագրական ճամբորդի

Թուհամոնը (ստատիստիկա) ԺԶ. *Տաթեւի Հոգեւոր վիճակի.* Ն. արեղայ Տէր-Ներսէսեան։ *Տաթեւի շարժական սիւնը եւ վանքը* (պատկեր)։

Գիտական զբօսանք

Թռչնիկը վանդակում (նկարով)։ Գ. Բ.։

Զուարճալիք

Հանելուկները, բացատրութիւնները։

Աշխէճի ծաղրածուն

ԳԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ

եւ յաւելած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № № 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1898 Թ.

* * *

Եւ այս վա-
ղայր իսկ աշ-
խարհումիայս
քար ու փուշ ճամ-

պէքով, դէպի արեւմուտք ձեռք ձեռքի տուած՝ վաղ առաւօտուն ծով։

Ա. Ի.



ՓՈՔՐԻԿ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ

(Անգլիերեն)

Մանկապարտիզի երգ

Ո՜ղջի՛կ, ծառոց մէջ ամուռս
Ինձ ի՞նչ խրրատ կ՚ուտամիդես:
—Տըխո՛ւր դէմքերն ես կ՚ա-
ուեմ,
Դու միշտ եղիր զուարթադէմ»:

Ծաղի՛կ սիրուն, պիտի տաս
Դուն ալ անչուշտ ինձ մի
դաս:
—«Պէտք է անոյշ բուրման
պէս
Բարի ամուն ծաւալես»:

Ձեր ձայնը ես չեմ ճանչեր,
Պարզ խօսեցէք, ո՛վ ճանճեր:
—«Օրերդ կ՚անցնինի, պատանի,
Կեանքդդ ըրէ պիտանի»:

Կ՚անսամ, չողի՛կ, քո խրատուն,
Հանգչէ ճակտիս վրայ դուն:
—«Ցնծա՛, եղիր խնդասէր,
Տո՛ւր ուրիշին նոյն դասեր»:

Իրք աշխարհիս անհամար
Մի ձայն ունին ինձ համար.
«Կ՚ուզե՛ս ըլլալ մարդ ընտիր,—
Մեր խրատուց ունկնդիր:

Վիւրտեմբերգ. Յ. Թ. ԳՈՅԵԱՆ

ԹԻԹԵՌՆԻԿԻ ԹԵՒԵՐԸ

—

Իրուն-սիրուն ու նախշուն, երփնագոյն ծաղիկներով զարդարուած մարգագետնում Թիթեռնիկի եաւից մի փոքրիկ երեխայ էր վազվզում, իսկ այդ միջոցին նրա պառաւ դայեակը հանգիստ կերպով նստում էր ծառերի ստուերի տակ։ Եւ մէկ էլ յանկարծ փոքրիկ երեխան վազեվազ եկաւ դայեակի մօտ և սկսեց շարժել ու քաշքշել նրան...

—Դայեակ, քեզ հետ եմ, դայեակ, թոթովեց նա վրդովուած—դայեակ, Թիթեռնիկի թևերն իրա՛ր կպցրու... սխալմամբ ես պոկեցի։

—Տէ՛ր ողորմեա, ինչե՛ր ես ասում, հոգիս... մի՞թէ կարելի է նորից թևիկները կպցնել... Վա՛յ, խելքի տոպրա՛կ... պատասխանում է դայեակը և քնաթաթախ աչքերը տրորելով վնթվնթում ու յօրանջում:

Բայց փոքրիկ երեխան չէ կարողանում հանդարտուել, այլ թախանձանքով և լալագին նա նորից աղերսում է իր դայեակին.

—Իրա՛ր կպցրու, դա՛յեակ, թևիկներն իրար կպցրու... մեղք է, իմ սիրտը մղկտում է սրա համա՛ր...

Լ.

ԱՐԴԱՐԻՆ Կ'ՕԳՆԷ ՈՂՈՐՄԱԾ ԱՍՏԻԱԾ!

I

Ժլատում էլ ձեզ պատմել մի նոր բան — Յանկարծ լիշեցի դրույց պապա-կան։

Գուցէ չատերդ լսած կըլինէք Դուք այն բարեպաշտ ոսկերչի մասին, Որ մեղք չէր գործել իր կեանքում երբէք, Ոչ գողացել էր, ոչ խաբել մէկին. Նա գլուխը քաշ գործին էր կենում, Հալալ քրտինքով իր հացը ճարում. Շուտ-չուտ կրկնում էր սրտով երկիւղած. „Արդարին կ'օգնի ողորմած Աստուած!“ Նա այս խօսքերով գործի էր նստում, Այս խօսքերով էլ գործից վեր կենում։ Սակայն ոսկերչի այդ սովորոյթը Շարժեց արքայի՝ սրտի զայրոյթը։

Արդար ոսկերչին մեր արքան կանչեց,
Թքեց երեսին ու մի լաւ ներկեց.
„Արդարին կ՚օգնէ ողորմած Աստուած,
Արդարին կ՚օգնէ ողորմած Աստուած...
Դու այս խօսքերըն այնքան կրկնեցիր,
Որ մեր բոլորի զահլան տարեցիր.
Տիրոջ անունը մաստակի նման
Բերանդ ես առել, ծամում յաւիտեան.
Բաւական է քեզ, յիմար, անամօթ,
Չասես այդ բանը էլ ոչ որի մօտ!...“

II

Եւ ոսկերչի մի ականջը մտաւ
Արքայի խրատն, միւսով դուրս եկաւ։
Երբ տեսաւ արքան, որ էլ ճար չկայ,
Ծառային տւեց մատնիք արծաթեայ.
„Տար այս մատանին, ոսկերչին յանձնի,
Թող ոսկեչրի, չուտով յետ դարձնի...
Ականջիդ ասեմ, ոչոք չիմանայ՝
Ուշադիր եղիր, աչքըդ չորս արա—
Տես թէ՝ որտեղ է պահում մատանին,
Ծածուկ գողացիր ու յետ բեր կրկին!
Եւ իր արքայի տւած հրաման
Մեծ վարպետութեամբ կատարեց ծառան։
Ոսկերչի վրայ մեր արքան խնդաց.

„Տեսնենք, հիմա էլ կ'օգնէ քեզ Աստուած"...
Ապա մատանին ձեռքըն առնելով՝
Դուրս եկաւ տնից, նետեց դէպի ծով։
Եւ ալիքները իրար զարնուեցին,
Ծովի անդունդը տարան մատանին։

III

Թեղմ ոսկերիչըն որոնեց երկար,
Սակայն մատանին չըկար ու չըկար։
Իր մօտ կանչելով նրան մեր արքան
Իսկոյն պահանջեց տւած առարկան։
Մեր ոսկերիչը լալով ծունկի չոքեց
Ու երեք աւուր ժամանակ խնդրեց.
„Ապասիր, արքայ, դարձեալ կ'որոնեմ,
Ես գիշեր-ցերեկ Տէրին կ'աղօթեմ,
Որ գտնեմ նորից մատանին կորած,
Արդարին կ'օգնէ ողորմած Աստուած!..."
Արքան երեք օր ժամանակ տւեց
Ու ոսկերիչին ճանապարհ դրեց։

IV

Մեր ոսկերիչը տխուր ու տրտում՝
Համր քայլերով չուկան է գնում։
Այստեղ ծերունի մի ձկնորս նստած՝
Վաճառք էր հանել ձկները որսած։
Եւ ոսկերիչը մօտեցաւ ծերին,

...Մեծ աչուրժակով նայեց ձկներին.
Թէպէտ կորուստը մտքից չէր գնում,
Բայց նրա փորը վեց-վեց էր անում:
Նա մի հիւթալի, խոշոր ձուկ գնեց,
Պոչիցը բռնած դէպի տուն դիմեց:
Նա բերեց կաթսան, փայտն ու ջուրը
Սկսաւ պատրաստել իր կերակուրը:
Երբ ձկան փորը դանակով ճղեց
Եւ փորոտիքը քաշեց, դուրս հանեց—
Օ, արմանք-չարմանք!... մեղայ քեզ, Աստուած,
Կորած մատանին յանկարծ չողչողաց...
Ում մտքով կ'անցնէր, որ ծովի միջին
Ձուկը կարող էր կուլ տալ մատանին.
„Աղքարին կ'օգնէ ողորմած Աստուած!"
Գոչեց ոսկերիչն խիստ ուրախացած:

V

Ետ փառաբանեց Տիրոջը անունը,
Ընտապով գնաց արքայի տունը:
Հէնց որ մեր արքան մատանին տեսաւ,
Բերանը բացաւ, սաստիկ ապշեցաւ...
Երբ ոսկերիչը ամեն բան պատմեց,
Ջերմեռանդ սրտով արքան ձայն տւեց.
„Այժմ իմացայ, որ ճիշտ է ասւած՝
Աղքարին կ'օգնէ ողորմած Աստուած!
Այսուհետ նոյնը ես էլ ամեն ժամ
Պիտի կրկնեմ ու Նրան փառք տամ!..."

Ցարութիւն Թումանեան

ԼԷՕՆ–ԿԸՏՄՐ

Հայկական աւանդութիւն

(Վերջ)

XVIII

բայց մեծ մասն Լէօնն անց էր կացնում դեղանի յոյն իշխանի հետ. ծանօթանալով նրա ազնիւ հոգուն՝ հետզհետէ լսում էր ծանր խընդրի մասին: Վերջապէս՝ մի օր նա հետեւեալը պատմեց.

—Հանդուցեալ կայսեր մահուան ժամին, նրա հաւատարիմ զօրապետներից մինը, յաջողութեամբ փախցնում է թագաժառանգուհուն և պահում մի ապահով տան մէջ: Այժմ՝ որ այս զազանաբարոյ, ապաշնորհ կայսրից զզուած է Յունաստան, թէ զինուորական թէ քաղաքացի, ռամիկ և թէ գիւղացի, դաղտնիութեամբ որոշած են գահը բազմեցնել դեռատի ժառանգուհուն...

—Ֆա շատ գեղեցիկ բան կըլինի—ընդմիջեց Լէօն,—անշուշտ իշխանուհին հայկական արիւն կրելով՝ մեր դեսպանին կ'ազատէ:

—Եւ կըհաղաղացնէ Հայաստանը, նրա փշալից թագն իր

Հարազատ տիրոջ գլխին թողնելով։—Լսի՛ր ինձ, բարեկամս։

—Լսում եմ՝ սիրելի իշխանս,—մտերմութեամբ պատասխանեց Լէօն։

—Այդ իսկ պատճառաւ իշխանուհին արտօնութիւն ստացաւ ծածուկ ղեկավարող ժողովից, ընտրել իր ցանկացած մարդուն ամուսին, որ փոխանակ ինքն անցնելու գօրքի գլուխ, իր ամուսնի գօրապետութեամբ կորճանէ բռնապետութիւնն ու տիրէ ժառանգութեան։

—Վատ ծրագիր չէ։

—Իշխանուհին հաւատարիմ մարդոց ձեռօք յաջողեցաւ դրել այս լուրն իր բանտարկեալ մօրը և ստանալ նրա հաւանութիւնը։ Այս դէպքը տեղի կունենար հէնց այն ժամանակ, երբ դու քննութիւն տալով՝ ճակատդ ճարտասանի պսակով էիր զարդարում։

—Ուրեմն այս օրերումն էր...

—Այո՛։ Եւ իշխանուհին՝ ազատ ընտրութեամբ որոշեց և գտաւ իր փեսացուն...

—Ուրեմն գործը կարգին է, սիրելի իշխան...

—Ըստ երևոյթին կարգին է։

—Տրամաբանապէս...

—Տարակուսելի... Մի հարց, բարեկամ։ Ինչպէս ես վերաբերում դէպի իմ անձնաւորութիւնը։

—Ո՛հ. սիրելի իշխանիկս, քնքոյշս, իմ միակ բարեկամը պիտի անւանէի քեզ, եթէ հաւասար դիրք ունենայի։

—Իսկ եթէ կին լինէի՛,—ժպտելով և կարմրելով հարցրեց նա։

—Ի՞նչ... կին լինէիր.—զարմանքով և ապշութեամբ.—անկարելի...

—Եթէ կարելի լինի, ազատ... խօսի՛ր...

—Ես քեզ կըպաշտէի, ազնիւ իշխանիկ, այս քանի աւուր մէջ ես հիացած եմ քո ազնութեամբ և շնորհալի կերպով, ես չէի կարող երևակայել՝ որ յունաց մէջ գտնւում է քեզ պէս

մի հրեշտակաբարոյ պատանի, թէև փոքրահասակ, բայց՝ օժտուած ազնիւ ձիրքերով...

— Լաւ, շառագունած միջամտեց նա,—ձեռք առնենք իշխանուհին:

—Անյագ քեղ եմ լսում:

—Ասացի որ իշխանուհին իր փեսացուն ընտրեց...

— Այո՛, բայց չէ՞ կարելի իմանալ ընտրեալի ով լինելը...

—Սպասեցէ՛ք, պատմում եմ...

— Ձատ հետաքրքիր եմ, իշխան, բայց՝ խնդրեմ եզակի խօսիր:

Պեռատի ասպետը գոհունակութեամբ ծիծաղեցաւ. նրա չքնաղ դէմքի վրայ փայլեց վարդագոյն կարմրութիւն:

—Եւ ո՞ւմ կարծես՝ որ ընտրած լինի Թագուհին:

—Անշուշտ մի մեծ յոյն իշխանի...

—Ո՛չ, նա մի հայի է ընտրել...

—Հայի՞,—Հիացած գոչեց Լէօն վեր թռչելով:

—Այո՛, բարեկա՛մ, մի խելացի, գիտուն, ճարպիկ ու քաջ հայի ընտրեց:

—Իշխան, դա մի մեծ բախտաւորութիւն է մեզ համար...

—Իշխանուհին,—շարունակեց պեռատի ասպետն իր մագնիսացնող հայեացքը Լէօնին յառած,—իր ընտրած անձի մասին հայոց պետպանին յայտնեց, որին դու պաշտում ես, Լէօն, միայն ոչ մեծ արքայազնի հատանութիւնն, այլև այսպիսի մի գովեստ ստացաւ.—«այդ ազնիւ, գիտուն, անվախ, յամառ պատանին, — գրում էր նա,—ստեղծւած է հայոց լեռանց վրայ յատկապէս կայսրութեան և ձեզ համար՝ իշխանուհի»... Հիմա, Լէօն, ասա ինձ, ո՞վ է այդ աննշան ծագումով հայ պատանին՝ որ յունաց թագի հետ յափշտակած է՝ առանց գիտենալու, գեղանուկ Արտէմիսի սիրտը... Ո՞վ է՝ որ շուտով պիտի բաղմի կայսերական գահ...

Լէօն կասկածով, գունատած ասպետին նայեց:

—Բարեկամ,—շարունակեց յոյն պատանին,—իշխանուհին

չըսիրեց իշխաններէ՛ց, ինքն է իշխանութեան պարզևատուն, նա ընտրեց իրանից բարձրին...

—Իրանից բարձրին, մի՛թէ կայսրուհուց բարձր ազնւական կայ։

—Գիտութիւնը։

Լէօն այլայլած ոտքի ելաւ, վեր ու վար շրջեցաւ, յանկարծ կրնկի վրայ դառնալով, կանգնեցաւ դեռատի իշխանի առաջ։

—Հայց,—ասաց նա դողդոջուն ձայնով,—կայսերական թագը գիտութեան հետ հզօր ձեռքով է պահանջում է... փեսացուն ունի՛ ձեռք։

—Պողպատէ ձեռք, երկաթէ մատներ։ Նա առիւծի չափ վեհանձն է, սատանայի չափ հպարտ է, նա իր ազգը նախատող մի յոյն իշխանի, ներկայ կայսեր սիրելոյն ձախ աչքը մի մատով փորեց...

Մի զարմանքի ժպիտ ու սարսուռ նկատեցաւ Լէօնի դէմքի վրայ. ոտները կթոտեցան, դողահար ընկաւ բազմոցի վրայ, ապշած խօսակցին նայեց, և այլայլուն ձայնով ասաց.

—Ինչպէս երևում է, փոքրահասակ իշխան, դու ոչ միայն պետութեան խոշոր դէմքից մինն ես, այլև ծածկատես լինելու գիտութիւնն ունես... բայց՝ ինչպէս չըհալածեցայ, հասկանալի է։

—Այդպէս համարենք. ուրեմն հասկացար ընտրեալի ով լինելը...

—Ո՜հ,—բացականչեց պատանին աշխուժով,—սքրզ է... բայց՝ իշխան. ո՛ւր է Արտէմիս... կարո՞ղ եմ սիրել նրան... Ըլլինի՛ հէնց չքնաղ Արտէմիս աստուածուհին լինի...

—Մի՛ տարակուսիր, Լէօն, դու սիրում ես նրան, կամենա՞ս տեսնել։

—Կամենա՞լ... Ես նրա ծառան եմ։ Ես չեմ շլանում փառքի, թագի փայլից, ո՛չ. անհունս երախտապարտ եմ թագուհուն, բացի լինձ իր անձն ամուսին ընծայելուց, որին՝ ասում

ես, կարող եմ սիրել, նա ինձ միջոց կրտայ իմ բարերարն ազատելու, որի շնորհիւ դիտուքիւն ստացայ, միջոց կրտայ Թշւառ հայրենիքս անդորրելու:

—Լէօն,—շարունակեց իշխանը,—իշխանուհին շլացաւ քո դիտուքիւնից, առնական շքեղ դէմքիցդ ու գործիցդ, որ բռնել էիր այժմ աչազուրկ յոյն իշխանի հետ. իշխանուհին ծրպտեալ քո քննութեան ներկայ էր, երբ քեզ բռնակալը դիտութեան սլաակն շպրտեց կոպիտ խօսքերով, իշխանուհին իր գլուխն ու թագը ոտքիդ տակ գրեց անհուն սիրով... Նա յայտնեց իր համախոհներին. դու նամակ ստացար և շնորհակալ եմ, որ անվտանգ եկար իմ և քո պալատը... Իշխանուհին՝ Լէօն, այս մի քանի օրւայ ընթացքում տեսնուեցաւ քեզ հետ, իմ մօտոյ քննեց, շօշափեց դէպքումներդ ու քեզ բոլոր սրտով սիրեց...

— Ինձ հետ, —տարակուսանքով ասաց նա, — Արտէմիս ինձ հետ տեսնուեցա՞ւ:

—Դու էլ նրան ես սիրում, Լէօն, ահա այստեղ է Արտէմիս:

Նա այս ասելով գլխից նետեց ոսկեզօծ սաղավարտը, արձակ մազերի հիւսերը, զարանակալ օձերի պէս փուեցան ուսերի և թիկունքի վրայ, իսկոյն մի սև շրջանակի պէս պատուրեցին նրա չնաշխարհիկ դէմքը. նա Լէօնի կրծքին ընկնելով ասաց.

—Մի քանի օր շատ լացի քեզ համար, պաշտելիս, լացի ոչ թէ տրտմութեան արտասուքով, այլ բերկրանքի՝ տեսնելով՝ որ դու էլ կարող ես ինձ սիրել:

—Ո՜հ... դու, Արտէմիս, դու ինձ փորձեցիր... թէև ես կասկածում էի, օն անդր, երջանիկ լինենք, սիրելի:

—Բախտաւորեցուր դիտութեանդ հայրենիքը...

XIX

Բիւզանդիօնը տօնական դգեստ էր հագած. բազմութիւնը խուռներամ դէպի կրկէս էր դիմում, ուր պիտի գլխատուէին հանդուգնեալ կայսեր կինը և արքայազն իշխան Հայոց դեսպանը, գաղաններից պիտի պատառոտուէին և մի քանի յոյներ ու մահապարտներ: Այդ շարժման, այդ կենդանութեան մէջ մի աչեղ դաղտնիք էր թաղած. բորբրդասոր շշուկներ, նշանագի խօսակցութիւններ ամբոխի և զօրքերի ալիքներին մէջ տեսնում էին յայտնապէս.

Զօրքը շրջապատեց կրկէսն, ուր և կայսրն ևկաւ իր շքախմբով:

Մի խումբ պահապաններով շրջապատած բերուեցաւ մահապարտ կայսրուհին. ծանր էր առաջանում սգատեսիլ թափորը, երբ բերուեցաւ կառափնարան, ուր կայսեր օթեակի առաջն էր. միւս կողմից էլ երևեցաւ երբեմն վեհապանծ Հայոց — դեսպանը, մահւան ցուրտ արհաւիրքով ազնիւ դէմքը ողողած:

Յանկարծ ճեղքուեցաւ ամբոխը, ինչպէս կարմիր ծովը Մովսէսին առաջ, ակնածութեամբ արձանացան հազարաւոր դլուխները, ի մեծ զարմացումն բռնակալ կայսեր՝ երևեցաւ մի երիտասարդ կայսրական զգեստով մի քանի հարիւր սպառազէն այրուձիով շրջապատած:

— Կեցցէ օրինաւոր կայսրը, մահ բռնակալին, — որոտացին կրկէս շրջապատող զօրականք, երբ այս թափորը տեսան:

— Անկցի բռնաւորը, մահ բռնաւորին, — արձագանքեց ամբոխը:

Բռնակալ կայսրն ապշած՝ չդիտէը ինչ անել, երբ հէնց իր թիկնապահներից մինը՝ թագը վերցրեց գլխից, ասելով.

— Բռնակալութեանդ օրերն անցան, մերկացիր ծիրանին:

Վայրագ կայսրը ընդոստ վեր թռաւ, թրով կիսեց յանդուգն թիկնապահի գլուխը, բայց՝ ի մեծ ցաւ իր սրտին, յանկարծ ինք զինք բռնած զգաց ուժեղ ձեռներից:

—Ջինուորներ. —Հրամայեց կրկէսն ալեկոծող երիտասարդը, որ կայսերական զգեստ էր հագած, ցոյց տալով բռնակալ կայսրն,—բռնեցէք դրան, վայր բերէք:

—Անկոչ բռնաւորն, մահ բռնաւորին,—գոռում էր ժողովուրդը:

Կայսերական մի քանի հաւատարիմ թիկնապահները իրենց տիրոջ օրինակին հետեւելով՝ մի քիչ խռովեցին կրկէսը. ոմանք մեռած, ոմանք վիրաւոր ընկան, մնացներն էլ անձնատուր եղան:

Բռնակալ կայսրը կաշկանդած կառափնարան իջեցրին: Այդ միջոցին հերոս երիտասարդն առաջացաւ դէպի մահապարտ կայսրուհին, ծնրադրեց նրա առաջ, ձեռներն համբուրելով ասաց բարձր ձայնով.

—Ազատ էք, մայր կայսրուհի, ձեր որդին կ'ազատէ ձեզ...

—Ա՛հ... Լէօն, դո՞ւ ես, — շշնչեց կայսրուհին և ուրախութիւնից մարեցաւ: Լէօն թիկնապահներին հրամայեց կայսերուհուն պատգարակով հեռացնել: Նա վազեց դէպի դեսպանը, մի ակնթարթում քակեց կապանքն ու նրա վիզն ընկնելով, լաց լինելով ասաց.

—Ո՛հ, իմ մեծ-իշխան, գիտցէք թէ մի տարի հոգու խորքից ողբան ցաւած եմ ձեր վրայ, կըներէք՝ որ հինգ օր ուշ ազատեցաք...

—Այդ դո՞ւ ես, որդեակ իմ Լէօն,—հիասթափուած պատասխանեց դեսպանը փոխադարձ համբոյրով,—դու իմ կեանքն ես ազատում հէնց այն րոպէին, երբ ես ինձ երկինքն էի կարծում...

—Իմ կեանքը ձերի փոխարէն իսկ զոհել պատրաստ եմ, մեծ իշխան:

—Ազնիւ սիրտ, ճշմարիտ մարդ...

—Պայիկներ,—գոչեց Լէօն,—հայոց մեծ իշխանն իր շքախմբին միացուցէք, առաջնորդեցէք իր սեպհական պալատը...

Անկեալ կայսրը կատաղի աչքերով տեսնում էր ու լսում։ Դեռ չէր վերջացած գոռ ու գոչը, երբ Լէօն հրամայեց լռել. մի քանի րոպէի մէջ թագաւորեց խոր լռութիւն...

—Բռնաւոր դու,—ասաց Լէօն խօսքը գերի կայսեր ուղղելով,—դու առանց խղճի խայթի շատ անմեղ արիւն թափեցիր, այսօր պիտի զարճանայիր թագակիր գլուխների ընկնելը տեսնելով, բայց Աստծոյ անիմանալի կարզադրութեամբ զահն իր օրինաւոր տիրոջ սրժանացաւ։ Պէտք էր քեզ սպանել, բայց՝ որովհետև քո բոլոր կոպտութեամբ մի օր գնահատած ես հանճարը, այն՝ «ով որ է». երիտասարդ փիլիսոփան կեանքդ քեզ է պարգեւում։ Ձեմ ուզում իմ կայսրութեան առաջին ժամուն քեզ սպանել, կեանքդ քեզ,—շքախմբին դառնալով,—զերծել սրա գլուխն ու բեխերը, նետել մի վանքի անկիւն։

Ժողովրդից ոմանք նախատել ցանկացան ընկած կայսրին, Լէօն խօսքը բազմութեան ուղղելով՝ տիրաբար հրամայեց.

—Յարգել անկեալ վեհափառութիւնը, ոչ մի խօսք չասել։

Պահիճները շրջապատեցին կալանաւոր կայսրին ու տարան. իսկ Լէօն իր ձին հեծաւ, ժողովրդի բուռն ծափահարութեամբ, կեցցէներով դիմեց պալատ, ուր սպասում էր Արտէմիս։

Լէօնի կրկէս մտած ժամին, մի լէգէօն զօրք յարձակւել էր կայսերական պալատի վրայ։ Խորտակեցին, կործանեցին բռնակալի հետքերը, գահը պատրաստեցին օրինաւոր տիրոջ համար։ Իշխանուհին Արտէմիս այս անցքից յետոյ՝ պալատ գնացած սպասում էր Լէօնին։

Մայր եկեղեցւոյ զանգակները զօղանջում էին, Բիւզանդիօն մեծ ուրախութեամբ պշուցած՝ Այա-Սոֆիա էր նայում։ Պալատից դուրս եկան երիտասարդ կայսրն ու Արտէմիս կայսրուհին, մտան փառահեղ կառքի մէջ, և շրջապատած մի քանի հազար սպառազէն այրուձիով, եկեղեցի գնացին։

Պատրիարքը, որ թշնամի էր բռնակալ կայսեր,—օրհնեց, Մեծն Կոստանդին կայսեր թագը դրեց Լէօն Հայկազնի գլուխն, օծեց նրա ճակատն և ինքն եղաւ առաջին հաւատարմու-

թիւն ուխտողն ու երկրպագողը նորատի կայսեր: Ապա մեծամեծ իշխաններն ու զօրապետները կրկնեցին երդումն ու երկրպագութիւնը:

Հանդիսականների մէջ առաջին տեղն էին զբաւում մայր կայսրուհին և Հայոց դեսպանը:

Լէօն՝ այն, կայսր եղաւ, բայց նա ջրափում տնկւած դրդումի պէս չըփքւեցաւ, առանց կայսերական մեծափառ դիրքը նւաստացնելու, ամկացնելու, յարգանօք և սիրալիր վարւեցաւ շրջապատողների հետ: Հայոց դեսպանին վերադարձրեց յարքունիս գրաւած ինչքն ու ստացւածքը. նրան յատուկ ուշիկ սահմանեց և խնդրեց՝ որ միշտ պալատն այցելէ:

—Ձեր մեծութիւնը,—մի օր ասաց դեսպանը,—հէնց գահակալութեան սկզբնաւորութիւնից ցոյց տւեց վարչական հմտութիւն:

—Գուք էիք ասում, մեծ իշխան,—թէ ուսումն ու դէնք պէտք է զուգափառ փայլեն անհատի վրայ: Ես ձեր խորհրդի մարմնացումն եմ...

XX

Կայսեր գահակալութիւնն սկսւեցաւ երջանկութեամբ, ուստի ցանկացաւ աշխարհին երջանկութիւն: Ձուտով կայսեր միջամտութեամբ խաղաղութեան դաշն կապւեցաւ Հայոց և Պարսից հետ: Մի քանի զօրապետներ էլ արևմուտք ուղարկեց, վասն զի վայրենի ազգեր պղտոր հեղեղի պէս խուժել էին Եւրոպա և թագերն իրար ետևից խորտակում:

Արտաքին աշխարհավարութիւնից յետոյ, նա ձեռնարկեց ներքին բարեկարգութեան, մի խումբ օրէնսդիրների յանձնեց քննել հին թագաւորների օրէնքները, և սիւտանիներն հաւաքելով մի օրէնսդրութիւն խմբագրել...

Նրա օրով շատ քիչ էին պատահում մահւան պատիժները, ամեն տեղ աչալուրջ հսկողութիւն կար:

Մի անդամ կայսեր ներկայացուցին մի մահավճիռ, որ ուշագիր կարդաց. դա մի հայ առազակի շահատակութիւնների ար-

ձանաղրուքիւնն էր. ուստի պէտք էր միայն կայսերական թոյլտուքիւն, և ահա նրա գլուխը պիտի ընկնէր...

—Ինձ մօտ բերէք այդ աւազակը,—հրամայեց կայսրը կարդալուց յետոյ:

Կէս ժամ յետոյ՝ ձեռներն ու ոտները շղթայակապ, ներս բերւեցաւ մի անձնեայ երիտասարդ. կայսրը վերէն վար քննելով՝ հարցրեց.

—Ո՞ր երկրացի ես դու...

—Հայաստանցի.—պատասխանեց աւազակն անյողդողդ:

—Ո՞ր գաւառից և ո՞ր գիւղից:

—Ես, Տէր արքայ, Մշու դաշտից, Խաս գիւղից եմ...

—Անո՞ւնդ,—յօնքը պռստելով և խստիւ:

—Անուանս Արամ է:

Կայսրը մտածմանն մէջ ընկաւ, մի քանի րոպէ մտայոյզ ճեմեց վեր ու վար, ապա նրա առաջ կանգնելով, հարցրեց.

—Ճանաչո՞ւմ ես ձեր գիւղացի Հասոյենց Թօրիկ տանուտէրը...

—Մեր գրացին է, Վեհափառ Տէր...

—Կենդանի՞ է նա, ապրո՞ւմ է նրա ամուսին Նունէն:

—Շորս ամիս առաջ կենդանի էին, բայց՝ այժմ չգիտեմ...

—Լաւ. կարճ խօսքով պատմիր ինձ նրանց վիճակը:

—Մի ժամանակ Թօրիկ Հարուստ էր, ցաւը կոտորեց նրա ոչխարն ու տաւարը, ապա իրար ետևից մեռան վեց որդիքը՝ թողնելով Թօրիկին մի խումբ մանր զաւակներ:

—Վե՞ցն էլ մեռան.—զոդաՀար հարցրեց կայսրը:

—Վեցն էլ, Տէր արքայ, երկուսը վերջին պատերազմին մէջ, մի սներն էլ մահ տառաժամից (ժանտախտ):

—Թօրիկ էլ որդի չունի՞...

—Մի որդի էլ ունէին,—աւա՜ղ, երանի ես նրա խօսքին լսէի, այժմ այս շղթաների մէջ չէի հեծեծել,—ունէին մի որդի, վերին աստիճանի ուսումնասէր, աղնիւ. նա անյայտացած է... Թերունի ծնողների միակ յոյսն է նրա վերադարձին

սպասել. բայց՝ զուր են սպասում, ես էլ իմ կողմից շատ որոնեցի նրան որ յորդորեմ հայրենիք վերադառնալ, խնամել ծնողներին չըզլանայ, խուզարկեցի բոլոր Յունաստան և...

—Կարողացար գտնել,—ժպտելով տիրուհեամբ, այլայլած, մայրենի լեզուով ասաց կայսրը:

Արամ հիացած յետ յետ գնաց: Կայսրն հրամայեց նրա կապանքը լուծել: Աւազակը կրաւորական հնազանդութիւն ցոյց տւեց, առանց կայսեր մտիկ տալ համարձակելու:

—Արա՛մ,—ասաց կայսրը,—յանցանքդ նեըւած է և կեանքըդ քեզ. կըստանաս իմ տէրութեան մէջ քեզ յարմար և լաւ պաշտօն, յատուկ զօրախմբով կըյարձակւես և կըկործանես աւազակների որջեր: Այսպէս ուրեմն՝ Արամ, քո մանկութեան «յիմար usամբակ Վրթնէն» է անում այս բոլորը:

—Տէր արքայ,—ծնրադրելով մրմռաց նա,—մանկութեան յիմար և ստամբակ կարծւածն իմաստուն ինքնակալ դարձաւ... ներեցէ՛ք ինձ...

—Ե՛լ, Արա՛մ, ոտքի ել, այս կայսերական գահն ու ծիրանին դու ինձ համար պատրաստեցիր, դու ինձ տւիր սուրն ու գայլիսօնը, դու ես՝ որ մեծաբանութեամբ ինձ մեծացրիր, բայց՝ ամիսս ինքդ խոնարհեցար մինչև գծուծ աւազակութիւն:

XXI

Շու գաշտը՝ վերջին պատերազմից յետոյ Յունաստանին էր մնացած՝ մի քանի հայկական գաւառների հետ, հարկատու էր կայսեր, ուստի կառավարող իշխանները կախումն ունէին Բիւզանդիօնից:

Գարնան վերջին յանկարծ լուր տարածւեցաւ Խաս գիւղում, թէ Յունաց Լէօն Հայկազուն կայսրն այցելութեան է եկած, հայկական քաղաքներն ու բերդերն է քննում, թէ այցելելու է և Խաս գիւղին:

Մեծ իրարանցումն սկսւեցաւ: Մաքուր բնակարան էին պատրաստում, գիւղը դրօշակներով զարդարում, ընտիր ուտե-

Պատմեցէք բովանդակութիւնը.

(Ձիես նկարագրողը կրսաանայ Թերենցի «Երկուցք» ինքնուրոյն դարու)

լիքներ պատրաստում: Այս բոլոր իրարանցման ժամանակ՝ միայն խեղճ Թօրիկն էր անտարբեր. նա պառաւ Նունէի հետ նստած՝ իր սև օրերն էր ողբում:

Մի օր որքան զարմացաւ սգաւոր ծերունին, երբ գիւղի տանուտէրն անձամբ գալով, խոր յարգանքով ողջունից յետոյ, ասաց.

—Ախէ—Թօրիկ, քեզ մի լուր ունիմ հաղորդելու:

—Խէր լինի, տանուտէր,—հառաչելով հարցրեց ծերունին,—ինչ լուր:

—Յունաց կայսրը գալիս է...

—Ինձ համար ինչ... Ես մի ծերունի, աղքատ, անպէտք մարդ եմ:

—Դու լսած կըլինիս՝ որ լաւ տուն էինք պատրաստել, բայց հիմա հրաման ստացայ քո տան մէջ պատրաստութիւն տեսնել, երեկոյեան այստեղ է լինելու մեծանուն կայսրը...

—Յունաստանի կայսրն իմ տան մէ՞ջ,—հառաչեց ծերունին յորդ արտասուք թափելով,—ափսոս, տանուտէր, իմ աղքատ ժամանակն է, եթէ ոչ ես գլխապատառ կ'ընդունէի մեծ հիւրին...

—Բայց՝ ախէ-Թօրիկ, ամեն բան մենք հոգացել ենք...

—Չէնց այդ է ինձ լացացնում, խորապէս խոցոտում, տանուտէր, դառն է ինձ իմ տան մէջ օտարի հացով կերակրել հղօր կայսեր:

—Ընդհակառակն: Խմացած լինիս, երեկոյեան այստեղ է լինելու. հիմա գործաւորները կըգան, տունը կըմաքրեն, զորգեր կըփռեն...

Թօրիկի տունը մրջնոց դարձաւ, հարիւրաւոր մուտ ու ել անողներ կային. արագապէս տունը պատրաստեցաւ, զարդարուեցաւ, լցուեցաւ առատ պաշարով: Բռնութեամբ, ոչ թէ համոզելով Թօրիկին ու իր պառաւին էլ հագցրին մաքուր շորեր:

XXII

Երիկնադէմին ողջ Մշու դաշտ ոտքի էր կանգնած. ծեր, մանուկ, այր ու կին՝ խմբեր կազմելով վազում, էին կտուրից կտուր, դէպի ճանապարհի մօտերը, որտեղից անցնելու էր ինքնակալը:

Մի քանի ժամ յետոյ, Մշու կողմից երևեցաւ մի վարար գետ, դա սպառազէն զօրքի շարքն էր, որ յորդան կըտար դէպի խաս գիւղ, որոնց սուր նիզակները, սրերը, սաղաւարտներն ու պղնձակուռ ասպարները փայլատակում էին արևի վերջին ցոլքերով: Նրանց մէջ աչքի էր ընկնում կայսերական ոսկեկուռ կառքը, մակեդոնացի սպիտակազգեստ Թիկնապահ գնդով շրջապատուած:

Գիւղի մուտքից մինչև Թօրիկի դուռը փռուած էին գորգեր ու կարպետներ, շաղ տուած Հայոց փարթամ ծաղիկները, որոնց վրայից անցաւ կայսերական մեծափառ Թափորը:

Թօրիկ ծերունի լինելով, գաւազանին կռթնած, կանգնած էր դրան առաջ, նրա մօտն էլ տանուտէրը իր ձեռին բռնած մատուցարանով աղ ու Հաց, Հայի սովորական պատկն իր վեհապետին նւիրելու:

Ահա մօտեցաւ աղմուկն ու դղորդը, լսւում է զէնքերի շկայլիւնը, շռինդ է բարձրանում, յանկարծ արագընթաց կառքը կանգնում է. նրա միջից դուրս է թռչում փայլակների պէս շողշողուն երիտասարդ կայսրը, մօտենում է ծերունուն և տանուտէրին:

Հայց՝ Բիւզանդիոյ ինքնակալը տխուր էր և դունատ:

— Ճաշակում եմ ձեր աղ ու Հացը,— ասաց կայսրը ժպիտով. իսկոյն Թօրիկի չորացած ձեռն իր ափի մէջ առնելով՝ խօսքը նրան ուղղեց,—կարծեմ, ծերունի Հայր, դու ինքդ ես իմ Հիւրընկալը:

Մինչդեռ Թարգմանն Հայերէն էր փոխադրում կայսերական խօսքը, մի սուր աղմուկ բարձրացաւ:

—Վա՛յ, իմ Վրթնէ, վայ, իմ աչքի լոյս որդի, դու իմ բալա ջան, քո արևուն ու եկած ճանապարհին մատաղ...

Պառաւ Նունէն այս խօսքերն ասելով՝ կարծես երիտասարդացաւ. զարմանալի արագութեամբ, դիւահարի պէս դէպի կայսրը խոյացաւ, Թիկնապահներն աշխատեցան կասեցնել, բայց գերբնական ոյժ ստացած Նունէն արդէն հասաւ, փարեցաւ երիտասարդի կրծքին ու նաղեցաւ:

—Ա՜յ, տնաքանդ պառաւ, ինչ ես անում,—մրմռաց Թօրիկ շշկլաճ:

Թիկնապահ, հանդիսատես ապշած էին. կայսրն անդիմադիր, արտասուալից աչքերով՝ անձնատուր եղաւ պառաւին, պահեց նրան իր կրծքին սեղմած՝ որ վայր չ'ընկնի:

—Ջես սխալւում՝ մայր իմ,—հեծեծեց նա հայոց լեզուաւ,—ես եմ, այո՛, անուշ ծնող, ես եմ՝ քո կորած Վրթնէն...

—Վրթնէ՞ն,—ողբալով գոչեց ծերունին ծնկի գալով,—դու՝ մեծ կայսր, դու Վրթնէ՞ն... Դու իմ կորած աչքի լոյսը... Ո՜, ես ուրախութեամբ կըմեռնեմ...

—Ես եմ, սիրելի հայր, քաջացիր՝ ներս գնանք:

Էլ ո՛վ կարող է նկարագրել ծնողների և համագիւղացիների ուրախութիւնը: Կայսրը մի քանի օր մնաց խաս գիւղում, ապա իր ծնողներն ու որբերը հետն առած՝ Բիւզանդիոն վերադարձաւ:

Ազնիւ նախանձը, ճշմարիտ հպարտութիւնը՝ նրան մանից հեռացրին՝ կայսերական գահի վրայ բազմեցուցին...—

Ս է յ ր ա ճ

ԵՐԵՉՏ ՏԱՐԻ

Դուրսը ամառ։
Արևը վառ
Հուր է թափում՝
Աշխարհ լափում։
Քամի չըկայ.
Ծառի վրայ
Մի հատ տերև,
Մի սար թեթև
Չէ տատանւում՝
Տեղից շարժւում։
Շոր էր տարիս.
Ամբողջ մայիս,
Յունիս, յուլիս—
Երեք ամիս՝
Մի կաթ անձրև
Շընկաւ ներքև։
Ոսոխն անհաշտ—
Տապ ու երաշտ
Բոլորն լափեց,
Փըշրեց՝ թափեց։
Վէրք մահացու.

Խեղճ գիւղացու
Աշխատանքը—
Վար ու ցանքը,
Հացաբոյսը—
Միակ յոյսը՝
Շեռից դընաց,
Բան չըմընաց...
Բոյսը՝ թօշնած,
Արդը՝ մարած,
Ծիտը՝ թառած,
Կեանքը՝ մեռած։
Առուն՝ ցամաք,
Գետը՝ բարակ,
Գիւղ ու քաղաք—
Տօթաճաճանչ։
Հօտը՝ ծարաւ,
Խոտը՝ չոր դաւ.
Հունձը՝ խըրխիւ,
Ցաք ու ցրիւ.
Ծառ, թուփ, արօտ
Ցօղի կարօտ,

Հովիտ ու սէգ՝
Արեւակէզ։
Մըլակ, մոճակ,
Ճանճ ու պիճակ
Աչք են հանում,
Ջահլա տանում։
Գիշերն էլ գայ՝
Խօ քուն չըկայ.
Անկշտում լուն—
Այդ սև գեռուն
Մարդ է հիւծում,
Հիւթը ծըծում։
Մի խօսք. տանջանք
Ու չարչարանք...
Բայց գիւղացի՛ն,—
Նայի՛ր խեղճին.
Վիզը ծռած,
Աչքը՝ ուռած
Ճունչը՝ սառած,
Սիրտը՝ մեռած,
Արտի կողքին
Կայ լալագին...

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

Մ Ի՛ Ն Ա Խ Ա Ն Շ Ի Ր Ո Շ Ո Ւ Ի Ն

—

Գարնան վերջն էր, երբ բնութիւնը՝ հրաժեշտ տալով իր մանկութեան, ոտք էր դնում երիտասարդական աւոյգ հասակի մէջ: Չովվիտներում վարդերն արդէն բացել և Թերթիկաթափ էին եղել, նրանց շոյող զեփիւռն էլ՝ աւելի բարձր տեղերն էր հեռացել: Նա մտել էր բլուրների լանջերը ծածկող թաւուտ մայրիների անտառները, որտեղ Թէ պատահմամբ մի ծաղիկ էր գտնում, հեզիկ շոյում էր նրան ու անցնելով ասեղնապատ մայրիների ոստերի միջով՝ սլանում էր դէպի բարձր լեռները, իր հետ տանելով Թէ ծաղիկներ և Թէ մայրիների խիժային անուշ բուրմունքը: Բարձրանալով դէպի լեռները՝ նա ազատօրէն մտնում էր գալիս սէգաւէտ խոտերի միջով ու տեսնելով այնտեղ արածող փոքրիկ, խայտաճամուկ գառներին՝ քնքշաբար խաղում էր նրանց փափուկ գանգուր մազերի հետ:

Արևը պատրաստւում էր հրաժեշտ տալ երկրին. նրա հրաշէկ գունդը աննկատելի կերպով թաւալւելով բիւրեղանման երկնքով՝ մօտենում էր արևմուտքին: Նրա ճառագայթները կամաց-կամաց վերանում էին ցած տեղերից դէպի աւելի բարձրը տեղերը, բայց այդ երևոյթը այնքան տիտուր տեսարան էր ներկայացնում, որ մարդ ակամայ յիշում էր՝ երկու անկեղծ և երկար ջերմ սիրող ընկերների իրարուց անջատւելու պատկերը: Հեռացողը կարծես՝ ասում է մնացողին. «Մի տխրիր, եղբայր, ես էլի ես կրդառնում, եւ այն երջանիկ րոպէն աւելի հաղցր կըլինի, քան թէ երկար ժամանակ իրար մօս գտնւելը»: Նա հեռանում է, նա գնում է այլ տեղեր, որտեղ նրան նոր տպաւորութիւններ, նոր շրջան ու նոր կեանք է սպասում. նա այդ փոփոխութեան ազդեցութեան տակ մոռանում է միառժամանակ իր նախկին ընկերոջը, մինչդեռ Հայրենիքում մնացողը տխրադէմ նայում է հեռացողի ետևից: Մռայլւում է նրա դէմքն ու սիրտը, շրջապատող կեանքը կարծես՝ մեռնում է նրա համար, նրա միակ մտածմունքն է ընկերոջ վերադարձը:

Ես նստած էի հէնց այն սահմանի վրայ, որտեղ վերջանում էր անտառը և սկսւում էր գալարախոտ լեռը: Ոչխարների ու գառների բոժոժների զնգզնգոցը ընդհատում էր խորհրդաւոր լռութիւնը: Նրանք ծածկւեցան մօտակայ բլուրի ետևը. ես այլ ևս չէի լսում ոչ նրանց միանւագ մայլիւնը և ոչ բոժոժների ուրախ զնգզնգոցը: Մի րոպէ չորս բոլորս տիրեց մեռելային լռութիւն:

Այս լռութիւնն ընդհատեց մի ճնճղուկ, որը ճախրելով ազատ օդի մէջ ու ուրախ երգելով՝ եկաւ կանգնեց իմ յանդիմման ժայռի ոստի վրայ, բայց չդադարեց ուրախ երգելուց. նա գլուխն այս ու այն կողմ դարձնելով, երբեմն թռչում էր մօտիկ ծառի վրայ ու այնտեղից գեղգեղում:

Ես այդ վայրկեանին անսահման նախանձում էի այդ թռչնակին.—նա ուրախ էր, նրա համար չէին բնութեան արգելքները, նա ազատ էր տարածութեան մէջ:

Ինքնակոր նայում էի, հեռուն նկատեցի մի փոքր ստւեր,

որ շրջաններ էր գործում և կամաց - կամաց մեծանում։ Յանկարծ այդ ուտերը մի ակնթարթում անյայտացաւ. այդ իսկ րոպէին ես լսեցի մի որտաճմլիկ ճիչ, աչքերս վեր բարձրացրի և ի՞նչ եմ տեսնում— մի հսկայ արծիւ, վեր է սլանում, ճանկերի մէջ բռնած այն ուրախ երգող ճնճղուկին, որ հիմա յուսահատական աղաղակ է արձակում։ Կարեկցութիւնս շարժւեց դէպի այդ ճնճղուկը։ Ես նրան այլ ևս չէի նախանձում, այլ ափսոսում էի և ազատելու հնար մտածում։ Բայց ի՞նչ կարող էի անել։ Աչքերս յառած՝ նայում էի այդ տխուր տեսարանին։ Ես այլ ևս չէի լսում ճնճղուկի ճիչը.— արծիւը շատ էր բարձրացել. նա տարածել էր իր լայնածաւալ թևերը օդերէն ովկիանոսում և կարծես՝ մնացել էր անշարժ այդ խելայեղ բարձրութեան մէջ։ Յանկարծ նա սլացաւ, որպէս սլինդաձիգ տղեղից արձակուած մի նետ։ Նա ցած էր գալիս, ուժեղ թևերով ճեղքելով օդը,որոնց օդի հետ շփելուց առաջանում էր սուլոցի նման մի շշուկ։Նա կանգ առաւ ինձանից բաւականի հեռու բարձրացող մի ժայռի գագաթին, բայց ես տեսնում էի նրա ինքնագոհ խրոխտ նայուածքը. դրանով նա կարծես ուզում էր ասել.— «Ես եմ անսահման օդի թագաւորը. նայեցէք ինձ վրայ եւ սարսափեցէք, թռչուններ, որովհետեւ ձեր կեանքը իմ կամքից է կախուած. նայեցէք ինձ եւ նախանձեցէք դուք մարդիկ, որովհետեւ ձեր խելքով դեռ չէք կարողացած ինձ նման օդի վրայ իշխել։ Դուք թէեւ ձեր օդապարիկներով բարձրանում էք օդի մէջ այնքան, որքան ես, գուցէ ինձանից էլ մի ֆիչ աւելի, բայց դուք նրա խաղալիկն էք, իսկ ես տէրը։ Ինձ համար ոչինչ է տարածութիւնը, իմ թռիչքը հաւասարւում է ձեր մտքի արագութեան հետ»։

Արծիւը խոնարհեց գլուխը և բաց անելով իր կոր, ուժեղ կտուցը՝ պատրաստւում էր մի հարուածով մէջ տեղից պատառել իր զոհը, երբ յանկարծ թռնդաց որսորդի հրացանը, և օդի այդ հզօր արքան իր զոհի հետ միասին թաւալգլոր ընկաւ իր տակը տարածուող մթին անդունդի մէջ։

ՆՈՐԵՆՑ

Ծ Պ Տ Ե Ա Լ—Ս Ո Ւ Լ Թ Ա Ն

(Պոլսական լեգենդա)

արիւր ու քանի մի տարի սրանից առաջ երբ ենիչէրիների և կղերի ձեռքով դահ բարձրացաւ սպասող Սէլիմ Գ. սուլթանը, նախորդների սովորութեան համաձայն իր վարժապետ Խոջայի հետ ծպտած դուրս եկաւ Իսքի-Սարայ ապարանքից մայրաքաղաքը՝ շրջելու և հասարակութեան զանգատները կամ գոհունակութիւնները անձամբ լրտեսելու: Նա հագել էր թեզմէի դերվիշի աղքատիկ հագուստ և գլխին ծածկել թազէի երկար նարնջագոյն գտակ, այնպէս որ ոչոք չէր կարող երբէք նրան հասարակ դերվիշից զանազանել: Սուլթանին առաջնորդող Խոջան էլ թէև մոլլայի կապոյտ ջիւբբէ ուներ հագին և ոսպիտակ ապարօշ գլխին, բայց սա էլ իր տիրոջ՝ սուլթանի նման շատ համեստ էր հագնւած և երկուսն էլ երկար համրիչները ձեռքերին՝ ծանր քայլերով և ձեղմ խօսակցութեամբ գիւղ Խանէի նաւամատոյցից նաւակ նստան և ծովի երեսին քիչ պտոյտ անելուց յետոյ, որպէս հասարակ քաղաքացիներ դուրս եկան Պալգ-Խանէի նաւամատոյցը:

Դեռ չէին մօտեցել ծպտեալները նաւամատոյցին՝ երբ հեռւից մի գեղեցիկ հագնւած երիտասարդ նկատեցին, որ հսկայ քայլերով նեղ փողոցից դուրս գալով՝ հասաւ նաւամատոյցը և

մենակ մի նաւակ վարձեց, որ նրան անցկացնէ Ոսկեղջիւրի վրայից դիմացը՝ Գալաթիա: Այնքան կոկիկ էր այդ երիտասարդի սև սաթի նման փայլող ջիւբբէն, այնքան նուրբ Բուխարայի մորթից էր կարւած զալփաղը (գդակ), այնպէս կուրծքին ու մէջքին քիւի փաթաթւած էր նրա սև քիշմիրէ էնթարիճ և սև գօտին, որ ահագին բազմուլթեան մէջ նա նկատելի էր, ոչ միայն իր մաքուր ու վայելուչ Հագուստով, այլ մանաւանդ բարձ հասակով, վայելուչ դէմքով, լայն կրծքովն ու ուսերով և կուրիճի շարժմունքով: Հազիւ քսան մէկ, կամ քսան տարւան լինէր երիտասարդը, կզակի նօսր մազերը հազիւ մէկերկու անգամ ածիլած լինէին, իսկ սև ու կարճ պեխերը դեռ մատ բռնելու չափ չէր երկարել:

Երիտասարդը երկար ժամանակ իր վրայ յառել տւեց ծըպտածների խոժոռ աչքերը, որոնք ուզում էին սլաքի նման թափանցել նրա սիրտը և ծակել, բայց բազմաչարչար Հայի զաւակը ոչ մի զանցառութիւն չէր արել. բոլոր Հագուստը, կապուտը, կօշիկները, կապերն ու կոճակներն անգամ՝ բոլորը սև էին կրում և Հայից անբաժան սուգն արտայայտում:

—Տեսէք, լաւ պիտեցէք, մատաղ լինիմ, ասաց Խոջան սուլթանին, տեսէք թէ որքա՜ն ընտիր ընտիր կերպասներով և թանկագին կտորներով է զարդարւել քեաֆիրը (անհաւատ): Սև են Հագնւում, իբր թէ օրինազանցութիւն չեն անում, բայց այդ քնքոյշ գործւածներ մի՞թէ վայել է այդ գի՜մմիին (գոյքով, կեանքով պարտական), կարծես պեծեր է թափւում գլխից ու վրայից:

—Ուղիղ է ասածդ, պատասխանեց սուլթանը, բայց քան չի կարելի ասել. ոտից մինչև գլուխ բոլորը սև սև կտորներով է ծածկւած: Օրինազանց չէ անօրէնը:

—Այդ անհաւատները կողոպտում են, կեղեքում են ժողովրդիդ և ահագին դանձեր են դիզում: Գրանց բոլորովին խնայելու չէ...

—Առանց դրանց էլ մենք բոլորովին կ'աղքատանանք, կը-

թշուառանանք: Մեր Հասարակական գանձարանը դրանք են լցնողը և Ալլահը դրանց մեզ շնորհել է, որ մեր մարմնաւոր վայելքների համար աշխատեն: Թող լցնեն մեր գանձարանը, թող բաւարարութիւն տան իսլամին, աւելացած փշրանքով էլ իրանք ապրեն, ասաց սուլթանը և դուրս եկաւ նաւակից:

Նրանք անցկացան նեղ նեղ փողոցներով և ճանապարհին Լիմոն-Իսկիլէի մօտ մի գենեռան առաջից անցկացան: Թպտեալները նկատեցին որ ներսը՝ գինետան մէջ յոյների հարբել երգում էին, նւագում ու պարում, որոնց բարձրացրած աղմուկըն ու ժխորը տարածւել էր մինչև անգամ մօտակայ բոլոր փողոցները: Սուլթանը ուշի ուշով լսում էր Խոջայի բոլոր նկատողութիւնները, որ երբէք չէր դադարում իր կրօնական պարտականութիւնները կատարած լինելու համար, յայտնել անհաւատների բոլոր պակասութիւնները ամենախիստ գոյներով և ամենակծու ոճերով ու բառերով: Նրանք անցան Ուզուն Չարշիից, բարձրացան ահագին դարիվերը և մտան Բէզէզթան:

—Ահա իրար ետևից և մեր քարաքի բոլոր ապականած վայրերը, հառաչելով ասաց Խոջան և մի քիչ խորհրդաւոր կերպով լռելուց յետոյ աւելացրեց.—գինետան գարշելի ձայները դեռ չեն հեռանում ականջիս միջից, հարբած յոյների պատկերները չեն հեռանում աչքիս առաջից:

—Գարշելի ու նողկալի տեսարան: Դրանց առաջն առնելու է, ասաց սուլթանը մտախոհ քայլերը ուղղելով Բէզէզթանից դէպի Սուլթան-Բայազէթ:

—Այդ անօրէն մուrsարները իրանց գինիով ապականում են բոլոր փողոցները, փչացնում օդն ու ջուրը և իսլամի բարեշնորհ հաւատացեալների կեանքը դառնացնում: Փողոցներում ամեն մի իսլամ անօրէն հարբածներին պատահելիս, շունչը շընչում է, հազուստը փալասներին դիպչելով պարտաւորւում է բաղանիս գնալ, մաքրւելու համար, գոնէ կրկին անգամ լւացւելու, որ կաթողանայ մաքուր սրտով, խաղաղ խղճով աղօթել: Ի՞նչպէս մզկիթներում, կամ իրանց խանութներում հանգիստ

սրտով աղօթքեն հաւատացեալները, երբ փողոցներում և գինետներում հարբած անհաւատները խոզի սոսկալի աղաղակներ են բարձրացնում:

Իսլամի նախանձախնդիր աշակերտը՝ Խոջան իր անվերջ չարախօսութիւններով խլացնում էր իր գահակալ աշակերտին և նրա սիրտը լցնում ատելութեան սոսկալի թոյնով: Սուլթանը մտածում էր, թէ ինչ դիրք բռնէր: Նա գինետները չէր կարող փակել, քանի որ նրանք ահագին հարկ էին տալիս իսլամի հասարակական գանձարանին, մանաւանդ որ այն ժամանակ քրիստոնեաները առանց այդ՛ հարկը վճարելու՝ էլի կարող էին գաղտնապէս իրանց տներում կարևոր գինին և ուրիշ խմիչքները պատրաստել և հարբել: Ներանք լռելեայն անցան Սուլթան-Բայազէթի հրապարակից դէպի Ֆաթիհ-Սուլթան-Մեհմէդ և այնտեղից ուղղակի բռնեցին Էյուբի ճանապարհը: Եկրար էին փողոցները և ամայի, հարիւր քայլին մի մարդու, մի խափշիկ աղախնի հազիւ էին պատահում, իսկ Խոջան ճարտարախօս էր: Նա անդադար, ջրվէժի նման սահուն պատմում էր Սուլթանին առօրեայ հարցերից, կատարած դէպքերից և անցեալի պատմութիւնից:

ԱՏՐՊԵՏ

(Վերջը միւս անգամ)

ԹՒԱՀԱՄԱՐ (*ստատիստիկա*)

ԺԲ.

աթեւի Հայոց Հոգեւոր վիճակում, որ է հին Սիւնիքը, այժմ Զանգեզուրի գաւառ, —կան այս Հայ գիւղերը. Տաթեւ 250 տուն, 2 քահանայ. մի եկեղեցի՝ ս. Մինաս անուանով. կրկնողութիւններով ընթերցողին չըձանձրացնելոր՝ համար, եկեղեցի բառը չեմ յիշիլ, այլ միայն նրան անունը կըդնեմ և իմացած լինիք, որտեղ քահանայ չեմ յիշում, այնտեղ անշուշտ մի քահանայ կայ, ուստի կընշանակեմ քահանաների թիւը այն գիւղերի մօտ, որոնց մէջ մէկից աւելի քահանայ կայ կամ ամենևին չըկայ:

Սեւարաց, 40 տուն, ս. Գրիգոր: Տանձաբակի, 40 տ. ս. Մինաս: Խոs, 80 տ. ս. Աստուածածին. Շնիէր, 300 տ. ս. Ստեփանոս, 3 քահ.: Հալիձոր, 80 տ. ս. Մինաս, քահ. չըկայ: Երիցաթումբ, 50 տ. ս. Աստուածածին: Եայիջի, 80 տ. ս. Մինաս: Ձիճաթաղ 100 տ. ս. Մարտիրոս:- Լոր, 80 տ. ս. Գէորգ: Գեսաքաղ, 60 տ. Աստուածածին: Գարաբաս, 80



Քարժական սիւնը.

Տաթեւի վանքը.

տ. ս. Ստեփանոս: Ջամբ, 40 տ. ս. Ստեփանոս, քահ. չրկայ: Լծէն, 48 տ. քահ. չրկայ:

Բռնակոթ. 400 տ. ս. Գրիգոր. 2 քահ.: Ղարաֆիլիսա, 120 տ. ս. Յովհաննէս. քահ. չրկայ: Ուզ, 200 տ. ս. Գրիգոր: Աղբեանդ, 60 տ. ս. Կարապետ: Ագեղակոթ, 300 տ. ս. Ստեփանոս: Բալահ, 50 տ. ս. Մինաս: Մազրա, 120 տ. ս. Աստուածածին: Ջուղաթ, 120 տ. ս. Գէորգ: Ախլաթիան, 130 տ. ս. Սարգիս: Բնուհիս, 70 տ. ս. Աստուածածին: Տոլորս, 100 տ. ս. Հռիփսիմէ: Թազագիւղ, 80 տ. ս. Գէորգ: Ալելու, 120 տ. ս. Գրիգոր: Ղարաղիլիսա 2-դ, 70 տ. ս. Աստուածածին, քահ. չրկայ:

Գորիս, 600 տ. ս. Հռիփսիմէ, 3 քահ.: Խոզնավար, 60 տ. ս. Մինաս: Միմեհանդ, 80 տ. Մինաս: Քարահոնջ, 130 տ. ս. Հռիփսիմէ: Առաւանց 40 տ. քահ. չրկայ: Մաղանջուղ, 50 տ. ս. Հռիփսիմէ: Գիորու, 40 տ. ս. Հռիփսիմէ: Ալիղուվի, 130 տ. ս. Հռիփսիմէ: Քարաշէն, 80 տ. ս. Հռիփսիմէ: Տեղ, 40 տ. ս. Գէորգ, 4 քահ.: Խնածուխ. 200 տ. ս. Հռիփսիմէ: Կուիճնոր, 260 տ. ս. Յովհաննէս: Խնձորեսկ. 1000 տ. 2 եկեղ. ս. Թադէոս, ս. Հռիփսիմէ, 4 քահանայ:

Քրտիկենց, 80 տ. ս. Աստուածածին: Հանդ, ս. Աստուածածին. 70 տ. Քաջարանց, 80 տ. ս. Աստուածածին: Փուխրուս 48 տ. ս. Ստեփանոս: Փիր-Մազրա, 80 տ. ս. Աստուածածին, քահ. չրկայ: —

Մեղրի, 128 տ. ս. Աստուածածին, 2 քահ.: Փոքր-Մեղրի, 70 տ. ս. Յովհաննէս: Վահրաւայ, 60 տ. ս. Գէորգ: Վանք, 50 տ. ս. Աստուածածին, քահ. չրկայ: Մալեւ, 50 տ. ս. Գէորգ: Թաշտոն, 80. ս. Ստեփանոս: Լիճք, 60 տ. ս. Գէորգ: Կարճեւան, 80 տ. Աստուածածին: Ագարակ փոքր, 50 տ. Ամենափրկիչ: Կուրիս, 40 տ. ս. Ստեփանոս: Կոդեմնիս, 40 տ. ս. Աստուածածնին, քահ. չրկայ: —

Հրկեճանց, 40 տ. ս. Կատարիչ: Ձափնի, 60 տ. ս. Գէորգ: Խլաթող, 70 տ. ս. Աստուածածին: Տորթնի, 20 տ. ս. Հռիփսիմէ: Վժենիս, 80 տ. քահ: չրկայ. ս. Յովհաննէս: Խոտանան, 80 տ. ս. Աստուածածին: Զրվիճանց, 50 տ. քահ. չրկայ: Ձկներ, 50 տ. ս. Աստուածածին: Կա-

ւարs, 80 տ. ս. Գէորգ: Սեւաfար, 80 տ. ս. Աստւածածին: Նորաշէն, 70 տ. Ամենափրկիչ: Ձիկաճող, 80 տ. ս. Ստեփանոս: Եղւարդ—100 տ. ս. Աստւածածին, քահ. չրկայ: Ձիւանիձոր, 120 տ. ս. Աստւածածին: Փոfր-Մազրայ, 20 տ. ս. Աստւածածին, քահ. չրկայ: Ջէյւա, 120 տ. ս. Ստեփանոս: Տանձրատիա, 40 տ. ս. Գէորգ: Խsրաճց, 70 տ. Ղորեքզրամեան: Ագարակ, 120 տ. ս. Աստւածածին: Բէխ, 50 տ. ս. Գէորգ ճկսէճ, 60 տ. ս. Հռիփսիմէ Կիւրկիւմ, 120 տ. ս. Հռիփսիմէ: Բաղավերջ, 80 տ. ս Հռիփսիմէ: Հանդ փոfր, 30 տ. ս. Հռիփսիմէ, Սրաշէն, 30 տ. ս. Հռիփսիմէ: Վաչագան, 70 տ. ս. Աստւածածին: Պառւաւթումբ, 70 տ. ս. Հռիփսիմէ: Ւռաջաձոր, 80 տ. ս. Գէորգ: Երիցվանիկ, 100 տ. ս. Հռիփսիմէ: Մողէս, 20 տ. ս. Աստւածածին:

Ընդամենն 86 գիւղ, 87 եկեղեցի, 85 քահանայ. եկեղեցիներից ամենից շատը ս. Աստւածածնի անուանովն է—20 Հատ. ս. Հռիփսիմէ--18, ընդամենն ս. կոյսերի անուանով 38 եկեղեցի: Ս. Գէորգ—12. ս. Ստեփանոս—11. ս. Մինաս—7. ս. Յովհաննէս—5. ս. Գրիգոր—4. Ամենափրկիչ—3. ս. Սարգիս—2. ս. Մարտիրոս.—1. Ղորեքզրամեան—1: Գիւղերի անուններից 68-ը Հայկական են, 19-ը Թրքական: Տների թիւը է 9230:

1896 թ. Հայ ժողովրդի թիւն էր 62,195 շունչ, որից արական 34,140. իսկ իգական 28,055:

1895 թւին այդ վիճակում Հայերի մէջ եղել է 2271 ծնունդ, որից արական 1240, իգական 1031: Յաջորդ 1896 թւին եղել է ծնունդ 2056, այսինքն նախորդ տարւանից պակաս 215 ծնունդ. արական 1169, իգական 887:

1895 թւին ննջեցեալ եղել է 745, արական 403, իգական 342. իսկ 1896 թւին ննջեցեալ եղել է 845, այսինքն հարիւրով աւելի. արական 440, իգական 405:

1895 թւին եղել է 547 պսակ, իսկ 1896-ին 505 պսակ, 42-ով պակաս: Այս թւերից պարզ երևում է, որ 1895 թիւը բարեյաջող տարի է եղել, վասն զի ննջեցեալը քիչ է, իսկ ծնունդ և պսակը շատ, իսկ 1896 թիւը դրա հետ համեմատած անյաջող է եղել, վասն զի ընդհակառակն մահը շատ է եղել, ծնունդ, պսակն էլ սակաւ: Այդ թւերից նմանապէս պարզ երևում է, որ ամեն մասերում արականների թիւը գե-

բաղանցում է իգականների թւերից: Տաթևի վիճակում կան շատ ժողովրդական ուխտատեղեր. վանք կայ պաշտօնապէս ճանաչւած 5 հատ— Տաթեւ, Անապատ, Որոտնայ վ., Ծիծեռնայ վ., Մեղրի վ. դրանցից վերջին չորսն ամայի են և անմարդաբնակ, տարւայ մէջ ունեն մի ուխտի օր, իսկ Տաթևի վանքում կայ մի վարդապետ և 2 աբեղայ, որոնք պահպանում են այս հնութիւնը, եկամուտները ժողովում են և տեղական ծախսերը հանած, մնացեալը ղրկում են ս. Էջմիածին: Տաթևի վանքի եկամուտը կրհասնի տարին եօթ հազար րուբլու. վանքը իր բոլոր շինութիւններով կիսաւեր դրութեան մէջ է. այստեղ ոչ մի բարեզործական կամ կրթական գործ չի կատարւում, թէպէտ խիստ բողոքող պահանջներ կան: Տաթևի վանքն ունի սեպհական անվիճելի ինն գիւղ, որոնք մշտնջենական կապալով տրւած են գիւղացիներին. Տաթև—600 ր., Տանձաթափ —120 ր., Լծէն—150 ր., Հալիձոր—260 ր., Զնհէր—820 թ. Խոտ—600 ր. Աղքահանդ—200 ր. Վարաքլիսայ—620 ր. և Քիրս—80 ր.: Տաթևի վանքն ունի մի հիանալի այգի Զիւանի ձորում, մի մեծ հրաշալի և երեք փոքր այգի Զնհէրում, ընդամենն 5 այգի. մի երևելի ջրաղաց Զնհերում, երկու հասարակ ջրաղաց Տաթև: Էլի վանքն ունի մի կտոր հող Քրտիկեանց գիւղերում: Միւս ամայի վանքերը կալւածներ չունեն, բացի Մեղրի վանքից, որ ունի մի փոքրիկ այգի, քիչ վարելահող ու մի ջրաղաց. դրանց եկամուտը գնում է Մեղրեցի պահապան քահանային:

Անապատի հողերը մինչև վանքի պարսպի տակը ծախւած են Տաթևացիներին տասը տարի առաջ:

Անապատի և Որոտնայ վանքի պահապանները Տաթևի վանքից տարեկան ստանում են երկու հարիւրական րուբլի և ամբողջ տարւայ խաչահամբոյրը, իսկ Ծիծեռնավանքի եկամուտը ստանում է Տաթևի վանահայրը: Վերոյիշեալների և հետևեալների համար ճիշտ թւահամար չեմ կարող դնել, վասն զի փոփոխական են ոմանք, մի քանիսն էլ չեն տօմարագրւած, մոլեռն են:

Ուրեմն Տաթևի վանքի մուտքի միւս աղբիւրներն են.

Ս. Նշան մեծ մասունքը, խաչահամբոյրը, իւղ, պանիր, ձու, վիլա, մատաղացու ժողովելը, սլտղին, լուսղին, լեռնայինն արօտների հարկ, քարահանք, ռեպհական ցանքսեր, կեսրրա

ցանքսեր, սեզհական ոչխար, տաւար։

Բացի դրանից վանքն ունի երեք տեղ վճռելի անտառներ և մի քանի տեղ հողեր. այդ վէճերի համար վանքը տարեկան ծախսում է 2000—3000 ր.։ Վանքի ամենահին միաբանը վկայում է, որ քսան տարուայ ընթացքում նա չի տեսել, որ վանքն այդ վէճերից տանող դուրս գայ, միշտ տարել է. այսուհետև էլ յոյս չըկայ, պնդում է յիշեալ միաբանը։ Մոռացանք յիշել, որ վերոյգրեալ 86 գիւղերը, աւելորդ չըլինի նշանակելը, բաժանւած են վեց հոգևոր գործակալութիւնների. առաջին՝ Տաթևի 14 գիւղ. երկրորդ՝ Սիսիանի 14 գիւղ. երրորդ՝ Զանգեզուրի 18 գիւղ, չորրորդ՝ Արեգունի-Մեղրի 12 գիւղ։ Հինգերորդ՝ Բերքուշատ գաւառ և ներքին Ղափան 30 գիւղ. վեցերորդ՝ վերին Ղափան 5 գիւղ։

Ն. ԱՒԳՈՒՅՏ ՏԷՐ-ՄԻՔԱՓԵԱՆ

Ֆիզիկական զբօսանք

ԹՌՉՆԻԿԸ ՎԱՆԴԱԿՈՒՄ

—

Մի թերթ թղթի վրայ նկարեցէք մի դատարկ վանդակ, իսկ կողքին, վանդակից մի քանի միլիմէտր հեռաւորութեան վրայ, թռչնակ:

Խնդիրը կայանում է նրանում, որ թռչնակին ստիպենք վանդակի մէջ մտնել:

Մի խաղաթուղթ կամ մի այցետոմս տեղաւորեցէք նկարւած երկու պատկերների արանքում, թղթին ուղղաձիգ. ձեր քթի ծայրը մօտեցրէք խաղաթղթին կամ այցետոմսին, և ուշի-ուշով շարունակ նայեցէք վանդակի և թռչնակի վրայ՝ այն ժամանակ դուք ձախ աչքով, օրինակի համար, կըտեսնէք վանդակը. իսկ աջ աչքով՝ թռչնակին. մի րոպէից ձեզ այնպէս կըթւայ որ իբր թէ թռչնակը շարժւում է, մըտնում վանդակի մէջ, և բռնեմ նշանակւած տեղը:

Մեր պատկերի ճիշտ ձևակերպութիւնը ձեզ այլ և այնպէս չի տալ, որ ինքներդ նկարէք այն, ինչ ցանկանում էք, տեղաւորեցէք խաղաթուղթը (կամ թէ այցետոմսը) A—B գծի վրայ այնպէս, որ նա պատերի վրայ ստւեր ձգելիս չըլինի, մի քանի վայրկեան նայեցէք և դուք կըտեսնէք, որ մեր ասածը ճշմարիտ է:

Գ. Ռ.

ՋԻՄԲՃԱԼԻՖ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ս. Սափարեանց.

18) Երկւորակ ենք մենք անբաժան,
Վեհ լեռների ազատ որդիք.
Եղբայրս աղ դարմագան,
Ես բիւր՝ ունեմ հրաշալիք,—
Որ ձեռք-ձեռքի տրւած, սիրով,
Ինչպէս մի զոյգ աղաւնիներ,
Կրչկրչալով, քրչքրչալով
Ընթանում ենք տիւ և գիշեր:
Մեր անցկացած ճանապարհին
Մենք ցանում ենք վարդ, մանիշակ,
Եւ արևակէզ այս աշխարհին—
Տալիս նեկտար քաղցրանուշակ:
Մեր անունով շատ գիտնականք
Մկրտում են իրանց մանկան,
Որ կարենան սէր, լոյս և կեանք
Տալ ծարաւի ժողովրդեան:
Այսպէս ահա. գիշեր-ցերեկ
Ընթանում ենք մենք մեր ուղին,
Բայց մեր ծրնող մօրից երբէք
Չենք բաժանւում ամենևին.
Գլուխները՛ս նրա գըրկում

Կաթն ենք ծրծում, կաթ թանգագին,
Իսկ ոտներով առնում-տանում,
Բաշխում անկուշտ, չոր աշխարհին։
Բայց ով ենք մենք, կա՞յ հարցնող՝
Պատասխանիր, դու ընթերցող...

Առաջ. Նոյեի.

19). Ես մի փոքրիկ դերեզման եմ,
Երկրագնդին շատ նման եմ.
Հիւանդներին լաւ դարման եմ
Եւ խընդուլթեան էլ նըշան եմ։
Մայրըս թաղած է ինձանում,
Բայց նա իմ մէջ չէ դինջանում.
Աշխատում է սիրտս ծակում
Եւ այդ ծակից գլուխը հանում։
Գոյնըս տեսնես՝ մաքուր վըրվուր,
Սիրտ ու հոգիս՝ երկգունի ջուր.
Ըմ կամենաս ինձ սովորցուր-տուր,
Նա կրշինէ լաւ կերակուր։
Տօն օրերին մարդկանց առաջ
Ես սուրբ պըրով վառ սըրտերի
Միջնորդ լինում Համբոյրների։
Ո՛չ ծով եմ և ո՛չ ցամաք.
Ի՞նչ եմ, պիտի դու՛ք իմանաք։

1Ը-ՐԴ ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ



Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
Միշտ փայփայող սիրոյ անշէջ ճառագայթ,
Դեռ կըսպասեմ թափել սրտից քոյ սյաք.
Զոհվ կըհսկես, վհիհ ես անդունդ թէ կմախք,
Որ սև ժայռից մէջ մարեցաւ այն բեկբեկ
Բարբառն վսեմ, թէ «զմիմեանս սիրեցէք»։—
Պետրոս Դուրեան։—

1) Փահլ. 127, 54, 99, 31, 145. 2) Յորեան։ 134, 88, 117, 60, 185, 152. 3) Վարդ. 1, 131, 148, 59. 4) Բռ. 149, 10 5, 120.

5) Պարսիկ. 174, 122, 11, 41, 78, 90. 6) Եփրատ 23, 72, 43, 56, 77. 7) Թուբէն.5 3, 81, 101, 140, 158, 186. 8) Մեզ. 160, 73, 87. 9) Սիս. 75, 125, 166. 10) Կուժ 111, 13, 182, 121. 11) Սարդ. 64, 18, 177, 104. 12) Ըստ. 91, 167, 33. 13) Թառ. 157, 46, 124. 14) Ձէր. 48, 172, 8. 15) Երբ. 95, 169, 143. 16) Եզ. 184, 159. 17) Սոխ. 179, 44, 114. 18) Ցին. 79, 9, 21. 19) Ցիռ. 171, 42, 151. 20) Վեց. 22, 100. 126. 21) Կարագ. 6, 28. 183, 71, 55. 22) Կէս. 62, 128, 93. 23) Դեն. 4, 175, 47. 24) Գայլ. 12, 52, 123, 36. 25) Տեսնել. 176, 141, 67, 165, 119. 84. 26) Դաս. 108, 85, 118. 27) Ջորի 50, 16, 132 168. 28) Մամ. 9, 35, 156. 29) Ճայ. 51 113. 30) Այդ. 5, 57, 180. 31) Սայլ. 69, 150, 45, 74. 32) Վահան. 153 26, 92, 7, 107. 33) Եփ. 147, 37. 34) Վէպ. 97, 110, 65, 35. Գեշ. 25) 170, 32. 36) Քեռի. 115, 163, 61, 10. 37) Սքեմ. 96) 173, 133, 112. 38) Թեփ. 109, 68, 34. 39) Ձիլ. 129. 20, 38. 40) Թոզ. 29, 181, 40. 41) Քամ. 86, 2, 162. 42) Թագաւոր. 58, 102, 15, 66, 136, 116, 76. 43) Կր, 142, 63. 44) Յովհաննէս. 19, 39, 89, 24, 164, 103, 139, 49, 154. Թուր. 17, 178, 106, 3. 46) Կեմ. 94, 144, 30. 47) Բաւիղ. 146, 137, 82. 161. 14. 48) Սագ. 83. 135, 27. 49) Թքեմ. 70, 80, 155, 130.

Խմբագիր-հրատարակիչ՝ **ՑԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ**

Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1–2.
Дозволено цензурою Тифлисъ, 18 іюня 1898 г.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

—

Տարազի №-26-ի հետ ուղարկում ենք առաջին կիսամեակի բովանդակութիւնը։ Թէ որ աստիճան ճոխ, բազմաբովանդակ է հրատարակւում այժմ Տարազը, այդ իւրաքանչիւր ընթերցող կարող է դատել։

Այսօրւանից Տարազը ներկայ թւականի երկրորդ կիսամեակն է թևակոխում։ Մենք ինչպէս առաջին կիսամեակին, նոյնպէս և այժմ կանխաւ ոչ մի խոստում չենք անում մեր ընթերցողներին. այլ միայն խնդրում ենք հայ մամուլի շահերը և նրա բարի բարգաւաճումը նկատի առնելով, իրանց բաժանորդագրութեամբ հայերը պահպանեն մեր միակ պատկերազարդ Տարազ շաբաթաթերթը, որ հեռու անձնական, մանր-մունը միտումներից, անկեղծաբար ծառայել է կամենում հայ ընտանիքներին իբրև օգտակար, բարի և դեղեցիկ ձեռնարկ։

Տարազի վեցամսեայ (յուլիսից մինչեւ յունուար 9ց թ.) բաժանորդագինը ճանապարհածախսով 3 րուբլի է։